թիւնների հետ, իսկ այժմ գալով ձեզ մօտ ասում եմ. հարկաւոր է աշխատել, հարկաւոր է շտապել. մեզ հետ մրցողները արդէն Ճանապարհի վրա են։ Ահա ձեզ խաղաղ կռիւ, որից դուք կարող էք յաղթող դուրս գալ, որովհետև բնութիւնը դէպի ձեզ աւելի առատ էր։ Ձեզ հարկաւոր է միայն ցանկանալ և համարձակ սկսել գործը (շարունակ ծափահարութիւններ)։ Ահա ես ուր էի գնացել։ Ես այդ արդէն ասացի ձեր բարեկամներին և կառավարիչներին։ Ես համեմատեցի ձեր գեղեցիկները, ձեր պայմանները, պէտքերը ուրիշների հետ։ Ես խօսում եմ ձեզ հետ որպէս հասարակ քաղաքացի և կարող եմ առաջարկել ձեզ միայն իմ անձնական, ազատ խօսքի գործակցութիւնը։ Բայց եթէ ինձանից կախում ունենար առաջ տանել այդ հարցը, այն ժամանակ, ի հարկէ, դուք չէիք յետ մնայ, երբ Ծովը ձեզ առաջ է կանչում (Բրավո և Ծափահարութիւններ)։

ԱՒՍՏՐՕ-ՈՒՆԳԱՐԻԱ

—

Լրագիրներից արդէն յայտնի է, որ Իտալական թագաւորը և թագուհին այցելեցին աւստրիական կայսրին Վիէննայում։ Այդ բանին երկու պետութիւններն ևս քաղաքական մեծ նշանակութիւն են տալիս։ Այժմ հաստատ յայտնի է, որ Ֆրանց-Յովսէփ կայսրը իտալական թագաւորի գալուպատճառով Վիէննա կանչեց իր տանը պատկանող բոլոր իշխաններին։ Աւստրիական ժողովուրդը ամեն տեղ հիւրերին հիացմունքով էր հանդիպում, չուզենալով իմանալ, թէ ի՞նչ օգուտներ կարող է ստանալ Աւստրիան այդ տեսութիւնից։ Վիէննայից Հռոմ ուղարկվեցաւ Գանգլբաուր արքեպիսկոպոսը մանաւոր յանձնարարութիւն ունենալով աւստրիական կայսրից. նա երկարատև տեսակցութիւն ունէր կարդինալ Եակոբինիի հետ։ Միւս օրը պապը ընդունեց արքեպիսկոպոսին։ Գանգլբաուրին ուղեկցում էր պալատական քահանայ Մայեր, որը ուղեկցում էր թագաժառանգ իշխան Ռուդոլֆին նրա Պալէստին արած Ճանապարհորդութեան ժամանակ։

ՆԱՄԱԿ ԹԻԻԲԻԱՑԻՑ

—

Կ. Պոլիս, 19 հոկտեմբերի

Թայմս լրագրի հրատարակած մի չարք առաջնորդող յօդուածներից հայոց խնդրի վրա երևում է, որ հայասէր անգլիացիք շատ նեղն են ընկել այն իրողութեան առաջ, որով յայտնվում է, թէ Հայաստանի բուն հողի վրա ոչ միայն հայերը փոքրամասնութիւն են կազմում, այլ ևս հայերը «չունեն» պարզ որոշված ազգային տէնդէնցիա և ինքնաճանաչութիւն։» Ուրեմն ինչ հիման վրա յենված հայոց դատին փաստաբանութիւն անենք, հարցնում են ամենաանկեղծ բարեացակամութեամբ շատ հայասէր անգլիացիք։ Որովհետև մեր մէջ խօսելով անմտութիւն կը լինէր եթէ աշխատէինք ինքներս մեզ խաբել, վասն որոյ թոյլ տուէք մի քանի դատ ճշմարտութիւններ յայտնել այս մասին։

Մենք սովորութիւն ունենք և շատ էլ սիրում ենք կրկնել անդադար թէ «հայերը կուլտուրական ազգ են», «թէ հայերը ունեն լաւ գրականական անցեալ և լաւ քաղաքակրթական ապագայ», «թէ հայերը ունեն ամեն մասնաճիւղերի մէջ պատրաստ մեծ մարդիկ՝ և զինուորական, և պետագիտական, և ֆինանսագիտական, և արուեստից, և գեղարուեստից մէջ և այլն», «թէ հայերը ունեն վերջապէս ազգային գաղափար, հայրենիք և հայրենագիտութիւն....» Այս ամենը ասելը շատ լաւ է, երբ մենք գործ ունենք օտարների հետ և երբ պատահում է երբեմն մեզնից մէկին օտար լրագրութեան մէջ հայոց մասին պրոպոգանդա անել, մեծ ազգերի և պետութիւնների համակրութիւնը մեզ վրա գրաւելու համար։ Բայց երբ խօսքը մեր մէջ մնալով կը սկսենք անաչառ կերպով մեր հալը քննել, կը տեսնենք, որ ոչ միայն վերոյիշեալ հայասէր անգլիացիք իրաւունք ունեն մեր դատի պաշտպանութեան համար տատամսել, այլ ևս իրաւունք ունեն մեր մասին ամեն ինչ ասելու նաև մեր թշնամիները։

Եւ մինչ մի օր մեզնից սիրտ կունենայ ձեռքը խղճի վրա դրած հաստատել թէ մենք որ և իցէ մի բանով արժանի ենք ոչ միայն քաղաքական ինքնավարութիւն ունենալու, այլ ևս ամենանշնչին մենաշնորհութիւններ անգամ։ Թող ոչ ոքի սիրտը չը վշտանայ ասածներից, որովհետև եթէ վշտանալու տեղիք լինի, ամենից առաջ նա պիտի վշտանայ, որը գտնվում է գործի նոյն իսկ աղբիւրի մօտ և ամեն օր կարողանում է ամեն ինչ տեսնելով աւելի զգալ, քան թէ հեռու եղողները։ Մենք անարժան ենք, ասում եմ, բայց մինչ սխալվում եմ այս ասելով. եթէ սխալվում եմ, ուրախութեամբ յետ կառնեմ խօսքերս եթէ մի կորիչ ապացուցանէ ինձ հակառակը։ Ահա մեր աչքի առաջ այն մեծ պատմական տագնապը, երբ հազար տարի ամենավատ տարկութիւնից յետ առաջին անգամ հայի ականջը «ինքնավարութիւն», «քաղաքական իրաւունքներ» և «ինքնօրէն Հայաստան» խօսքերն են լսում, բայց ինչ են անում այսպիսի մի ժամանակ այն «մեծ պետագէտները», այն «մեծ ֆինանսիստները», «զինուորական հանճարները», «մեծ ատենաբանները», «գրագէտները և իմաստասէրները», որոնցով մենք պարծենում ենք օտարների առաջ. մինչ այդ ամենից մի մանանեխի չափ օգուտ կայ թշուառ, անտէր ազգին այնպիսի մի ճգնաժամի մէջ, երբ վճռվում է, երբ զանազան կողմերից վիճաբանվում և փորձանքի է ենթարկվում նորա լինելու և չը լինելու հարցը, նրա գոյութեան, կեանքի և մահու խնդիրը։ Այն օրը պատրիարքն էր ասում թէ ամեն օր իրան շուրջը հարիւրաւոր ազգասէրներ կը պատեն, կը երդվեն յանուն ազգի և հայրենեաց, իսկ յետոյն էլ այնչափ զգածված ցոյց կուտան իրանց, որ երբեմն կարտասվեն, բայց գործը իրականութեան հասնելիս, ամենքն էլ մէկ կողմ քաշվելով իրան կը թողնեն մէն ու մենակ, առանց ոչ միայն նիւթական օգնութեան, այլ ևս բարոյական։

Մինչ այդպէս չեն և ամեն տեղի հայերը, և ուսանողները. խրախուսելու համար. այո, երբեմն ստիպված ենք գտնվում հարիւր ու մէկ մխիթարական բաներ ասելու. վերջապէս մարդու բերանն էլ երբեմն չէ զօռում հայերի թերութիւնները ցոյց տալ, որովհետև մի ներքին ըզգացմունք, մի խուլ ձայն, որ ասվում է «էր և յոյս, մարդուն դրդում է միայն մխիթարութիւն և գովով սնուցանել սրտի մէջ դէպի իր ազգը. բայց քանի մէկ մարդ իրան խաբէ և հլու հպատակութեամբ ենթարկվի այդ ներքին թշուառ ներշնչման... Մտածում է մարդ. Տէր Աստուած, մինչ հայ ազգը նորա համար միայն ստեղծեցիր, որ նա միշտ ամենից թշուառը լինի. մինչ բոլոգարների չափ էլ չը լինենք, որոնք աշխատում էին իրանց ազատութեան համար այնչափ անհատների անձնուիրութեամբ, որչափ անհատ կը հաւէր ազգը իր ծոցում. իսկ մենք քանի անհատներ ունենք ազգի համար աշխատող, ազգին հոգի ու սիրտ ներշնչող... Ահա խեղճ Օգեանը, որը ամբողջ մի տարի փարիզ ապրելով, գիշեր ցերեկ անում է ինչ կարող է. ուրն է նորա վիճակը. կուզէք ասեմ. նա այնչափ թշուառութեան մէջ է, որ օրը մի քանի սու է նրա ապրուստի գինը, բայց գիտէք ինչ անձնական զոհ բերաւ նա իր ազգային պարտքի առաջ. նա զոհեց ծերակոյտի անդամի և ամենաարժանաւոր պետական մարդու պաշտօնը, իր հարիւրաւոր ոսկի ամսական ռոճիկը այդ մի քանի տարին, որով հազիւ թէ օրը մի երկու գդալ տաք մսի ջուր է կարողանում հարել իր գոյութիւնը պահպանելու համար։ Բայց... ո՞վ է մտածում նորա համար. ո՞րը մեր «մեծ ֆինանսիստներից», մեր «մեծ տաղանդներից...»

Լմօթ է ինձ որ և է համեմատութիւն բերել Օգեանի հետ, բայց տեղը ընկաւ պիտի ասեմ. քանի քանի մարդիկ են գալիս ամեն օր ինձ մօտ Ռուսաստանի խորքերից սկսած մինչև փոքր և Բարձր Հայաստանի ծայրերը. քանի քանի լեզուագէտ և ճարպիկ անձեր են դնում իմ տնօրինութեան տակ գործ ածելու համար իրանց ընդունակութիւնները այն ուղղութեամբ, որին աւելի յարմարութիւն ունեն իրանք, բայց ինչ կարող եմ անել ես, մինչ պատրիարքից էլ աւելի պիտի լինեմ. մինչ նորա իրաւունքից էլ աւելի իրաւունք պիտի բանեցնեմ. իսկ եթէ ուզեմ էլ. կարողանամ էլ, բայց ինչով և ինչպէս։ Վանորոյ ակամայ ստիպված ես գտնվում ասել ամեն եկողին. «ազնիւ մարդ, երկրպագում եմ քո ազնիւ ոգեորութեան առաջ, բայց ցաւում եմ, որ ոչնչով չը պիտի կարողանամ քեզ խրախուսել....» Լուռ ու մունջ վեր կը կենայ, կը հեռանայ հայրենասիրութեան խեղճ միամիտ պաշտօնեացուն. մէկ էլ տեսար, որ միւս օր մէկը փաստաբանութեան է ձեռնարկած, մի այլը խանութ է բացած, իսկ մի երրորդը վերադարձած Հայաստան իր հողը հերկելու... Մենք ալբանիացիներին «վայրենի և բարբարոս» ենք ասում, ուրեմն մենք ինչ պիտի լինենք, երբ այդ «բարբարոսները» հայրենիքի ճգնաժամը հասանելիս երեք ամսվայ մէջ այնպիսի լիգա կազմեցին, որ մինչև հիմայ ևս երեք—չորս դրացի տէրութիւնը կը սարսին, իսկ մենք թըշուառներից թշուառներս չենք կարող քսան, տասը, հինգ, երեք, երկու, մէկ գործող անգամ ապահովել փարիզ, Լօնդօն, Պետերբուրգ թէ այլ ուր. այսչափ է մեր «բարձրութիւնը» վայրենի ալբանցիներից... խեղկատակ, բայց խեղճ ազգ...

Նոյն նիւթի վրա ամենից լաւ, ամենից պերճ ինքը պատրիարքն էր խօսում այն օրը. «ահա եղբայր քեզ մի օրինակ» ասում էր մեր հիանալի պարագլուխը. «երբ անցեալ տարի խօսք կար թէ Թիւրքիան մտադրվում է Բալկանները գրաւել. երեք օրվայ մէջ բոլգարները, այն էլ Ռումելիայի բոլգարները. վաթսուն հազար ոսկի (մօտ 600 հազար ռուբլ) ժողովեցին հարկաւոր պատրաստութիւնների համար, իսկ մենք...»

Ուրեմն այս ամենից ինչ է հետևում. չատ ենք արժանի մեծ մեծ բաներ ստանալու. չատ ենք իրաւունքով Թիւրքիայի վրա երկար լեզու բանալու. չատ ենք արժան, որ Զէյմս Բրայս, Հարտինկտոն, Կարնարվոն և Դլադստոն մեզ համար Եւրոպայի հասարակաց կարծիքի առաջ նահատակվեն... Ո՞ւր են մեր մեծ մարդիկը, մեր «միլլիոնատերները», մեր «ֆինանսիստները», «մեր գրագէտները» և «մեծ զինուորական տաղանդները...» Ի՞նչ օգուտ այդ ամենից, որով մենք պարծենում ենք ասելով թէ՝ մենք ամեն ինչ ունենք, միայն թագաւորութիւն է պակաս...» Այսչափ էլ կարելի է խեղկատակ և ծաղրելի լինել. այսչափ էլ կարելի է դարդակ ինքնահաւանութիւն ունենալ... Ո՞ւր են մեր խմբագիրների ձայները. ո՞ւր են Գամառ-Գաթիպաները և նոցա հրաւէրը. ազգի ճգնաժամը հիմայ է. կամ այժմ կամ երբէք...

Այս օրերս հասաւ այստեղ նկարիչ Յովհաննես Այվազովսկին. օտար խմբագիրները երբ ներկայացան նորան, նա ասեց. «ինչ ուզէք գրեցէք. միայն մէջ գրի peintre armenien»։ Ահա այն մարդիկ, որոնցով մենք պարծենում ենք։

Գրիգոր Նիկողոսեան

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Սարա Բերնար։ Լրագիրներից արդէն յայտնի է, որ ֆրանսիական երևելի դրամատիկական դերասանուհի Սարա Բերնար հրաւիրված է Սանկտ-Պետերբուրգ մի քանի ներկայացումներ տալու համար։ Ուրեմն աւելորդ չէր լինի նշանաւոր դերասանուհու կեանքից մի քանի մանրամասնութիւններ բերել։ Սարա Բերնար, դեռ ևս մանուկ հասակում, Ֆրանսիայի ամենաարիստոկրատիական ուսումնարանում եղած ժամանակ, վերսալում, Grandchamp վանքում ցոյց տուեց իր նշանաւոր ընդունակութիւնները։ Վանքը թողնելու ժամանակ, երբ նա առաջին անգամ կարող էր ձեռակերպել իր ցանկութիւնը ապագայի վերաբերութեամբ, նա բացականչեց՝ «ես կամենում եմ կոյս դառնալ», և իր շրջապատողների զարմանքը նկատելով, աւելացրեց՝ «բայց եթէ ես դերասանուհի չը դառնամ»։ Այդ ժամանակ միտք ծագեց կօնսերվատորիա տալ նրան։ Բայց յայտնի է, որ այդ պետական ուսումնարանը մտնելու համար անհրաժեշտ է առաջուց քննութիւն տալ։ Իւրաքանչիւր կանդիդատ պարտաւոր է, իր ընտրութեամբ, մի որ և է բան արտասանել, կարդալ առանձին յանձնաժողովի ներկայութեամբ։ Սարա Բերնար գիտէր Լաֆոնտէնի «Երկու աղաւնի» առակը։ Բայց հէնց որ նա մի քանի խօսք արտասանեց այդ առակից, ս. Օբեր ընդմիջելով նրան ասաց. «բաւական է, որդեակս, մօտ արի այստեղ»։ Մանուկը քաջ և համարձակ կերպով մօտեցաւ։ Այն ժամանակ նա գունատ և լղար էր, մինչև անգամ տգեղ, բայց աչքերից կրակ էր ցայտում, որը նրա գեղագրութեանը կենդանութիւն էր տալիս։—Սարա Է անունդ։—Այո։—Դու հրէուհի ես։—Հրէուհի եմ ծնված, բայց մկրտված եմ։ Ես մկրտված է, ասաց Օբէր դառնալով իր ընկերներին։ Ցաւալի կը լինէր, եթէ այդպիսի հիանալի երեխան մկրտված չը լինէր։ Նա շատ լաւ արտասանեց «Երկու աղաւնիների» մասին առակը։ Նրան հարկաւոր է ընդունել։ Սարա Բերնար կօնսերվատորիա մտաւ և Գրամատի աշակերտուհին դարձաւ։—Նա դասեր էր վերցնում նոյնպէս Սամսոնից։ Դրանք դեկլամացիայի ամենալաւ պրոֆէսորներն էին այդ ուսումնարանում։ Նա իր ուսման ընթացքը աւարտեց մեդալով և սկսեց խաղալ «Comédie Française» թատրոնում։ Հէնց առաջին անգամ երևալով թատրոնի բեմի վրա պատահեց այն, ինչ որ սպասելի էր։ Սարա Բերնար շուտով թողնում է վերոյիշեալ թատրոնը, յետոյ անցնում է «Gimnase» թատրոնը, այդ վերջինը ևս թողնում է, և մի քանի ժամանակ անգործ է մնում, վերջապէս կրկին բեմ է դուրս գալի «Ֆէյի» դերում։

Վերջնական յաջողութեան և դերասանական փառքին հասնելու ճանապարհի վրա, նա մի քանի կլասիկական դերեր ստեղծեց։ Բաւական է յիշել կօրդելիայի դերը Շէկսպիրի «Լիր թագաւոր»-ի մէջ, և «Դոննա Մարիայի» դերը «Ruy-Blas» պիէսայում։ Այդ յաջողութիւններից յետոյ «Comédie Francaise» կրկին հրաւիրում է Սարա Բերնարին։ Նա ստեղծում է դեր «Belle—Poule» պիէսայում, և իր խաղով գրականական յայտնի անուն է շնորհում Դէնէյրուզին, ինչպէս գրականական անուն չինեց կօպպէի համար, խաղալով նրա «Passart» պիէսայի մէջ։ Դրանից յետոյ նա իր դերասանական ասպարէզի մէջ մեծ յաջողութիւններ ունեցաւ և զանազան պիէսաների մէջ ցոյց տուեց իր մեծ տաղանդը։ Չը կայ մէկ աննշան դեր, որը նա իր տաղանդի շնորհով չը կենդանացնէր, առաջին պլանի վրա չը դնէր։ Ոչ թէ միայն դրամատիկական արհեստի մէջ երևաց նրա տաղանդը, բայց և Սարա Բերնար լաւ քանդակագործ է համարվում։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 հոկտեմբերի։ „Правит. Вѣстн.“ լրագիրը հաղորդում է որ կազմվում է մի մասնաժողով հրէական խնդիրը իր ամբողջ էութեամբ հետազօտելու համար։ Նախագահ կը նշանակվի ներքին գործերի մինիստրի օգնականը։ «Новости» հաղորդում է որպէս լուր, որ դիտաւորութիւն կայ վերցնել այն փանքերը, որոնք գոյութեան համար միջոցներ չունեն։ Վանքերի երրորդ մասը այդ դրութեան մէջ է։

ԲԵՐԼԻՆ, 26 հոկտեմբերի։ Իշխան Բիսմարկ յայտնել է հաստատ դիտաւորութիւն ընդդիմադրել հակահրէական շարժմանը։ Շտէնների հրաժարականը իր պաշտօնից առաջին քայլ է այդ ուղղութեան մէջ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 հոկտեմբերի։ „С.-Петерб. Вѣдом.“ լրագրում տպված է մի հեռագիր կ. Պոլսից, հոկտեմբերի 25-ից, որով հաղորդվում է թէ Արաբիայում ծագած խռովութիւնները շատ անհանգիստ են անում Սուլթանին։ Ասում են մեծ շէրիֆը յայտնեց իրան խալիֆ և ազատելով Միդհատին՝ նշանակեց նրան՝ քաղաքական կառավարիչ Արաբիայի խալիֆատի։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ